Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19 -ի N 1230 - Ն որոշման

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը

Արմեն Նազարյան

2. Զբաղեցրած պաշտոնը

ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները

2022 թ. նոյեմբերի 21-25-ը, Նիկոսիա (Կիպրոսի Հանրապետություն)

4. Հրավիրող կողմը

Կարմիր խաչի միջազգային կոմիտե (ԿԽՄԿ)

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Այցի հիմնական նպատակն էր ծանոթանալ անհայտ կորած անձանց աճյունների որոնման, դուրսբերման և նույնականացման ուղղությամբ Կիպրոսի Հանրապետությունում իրականացվող աշխատանքներին, որոնք մեծացրել են ինստիտուցիոնալ ծրագրերի մշակման և իրականացման ոլորտում առկա կարողությունները:

6. Քննարկված թեմաները

Հանդիպումների ընթացքում քննարկվեցին անհայտ կորած անձանց աճյունների որոնմանը, դուրսբերմանը և նույնականացմանն առնչվող մի շարք հարցեր, մասնավորապես՝ հնարավորություն է ստեղծվել ծանոթանալ գործող նույնականացման լաբորատորիաներին, որտեղ իրականացվում են մասունքների մարդաչափական համադրումներ և նույնականացում:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Այցի շրջանակներում այցելել ենք Կիպրոսում անհայտ կորածների հարցերով կոմիտե (CMP) (այսուհետ՝ Կոմիտե): Տեղում ծանոթացել ենք Կոմիտեի կազմակերպչական գործառույթներին, տեղեկատվության պահպանման

հնարավորություններին, լաբորատոր կարողություններին, ինչպես նաև տեխնիկական հնարավորություններին: Կոմիտեի կողմից իրականացվող աշխատանքների վերաբերյալ գրեթե բոլոր ստորաբաժանումների ղեկավարները ներկայացրել են համապատասխան զեկույցներ և թվային տվյալներ: Լաբորատորիայում ծանոթացել ենք մասունքների մարդաչափության իրականացման գործընթացին, դրանց նույնականացմանը, ինչպես նաև հետագա արխիվացմանը: Այցելել ենք նաև պեղումների վայր, որտեղ իրականացվում էին հնարավոր մասունքների հայտնաբերման աշխատանքներ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Կոմիտեն պատրաստակամություն է հայտնել անհրաժեշտության դեպքում կազմակերպել համապատասխան մասնագետների վերապատրաստում: Միաժամանակ, Կարմիր խաչի միջազգային կոմիտեի միջոցով հայկական կողմին կփոխանցվի քննարկված թեմաներին վերաբերող ամբողջական նյութերը, ինչպես նաև անհետ կորածների վերաբերյալ վարվող տվյալների բազայի ալգորիթմը:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Հանդիպումների արդյունքում առաջարկվել է Կարմիր խաչի միջազգային կոմիտեի միջոցով շարունակել հնարավոր համագործակցությունը՝ տեսական աջակցություն կարիքի դեպքում:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

2022 թ. նոյեմբեր 29

Recoverable Signature

X

ԱՐՄԵՆ ՆԱԶԱՐՅԱՆ

Signed by: NAZARYAN ARMEN 3712760329